# Ինչ են խոսում

Գիտե՞ք, լինում է այնպիսի իրադրություն, երբ շուրջը պատահում է ու փոքրիկ, իսկ մեջտեղում լիակատար հանդարտություն: Հենց այդպես էլ ես կնկարագրեի իրադրությունը Հայաստանում: Այստեղ (Մոսկվայում— ԱԿ) մեզ վախեցնում են հայ գրոհայիններով, իսկ այնտեղ հարաբերականորեն նորմալ կյանք է, և, ի տարբերություն Մոսկվայի, հավկիթը վաճառվում է պետական գնով: Հայ ժողովուրդը նորմալ աշխատում է ու վստահում նոր ղեկավարությանը:

Ապակայունացնող գործոն է մնում Ղարաբաղը, ուր մտցվել են վիշապային դաժան միջոցներ: Այնտեղ ձերբակալվել են Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորներ՝ առանց Գերագույն խորհրդի թույլտվության: Պատահական չէ, որ Ղարաբաղից ետ են վերադարձրել Եվրախորհրդարանի պատգամավորներին, որոնց հետաքրքրում էր մարդու իրավունքների վիճակը այդ ինքնավարությունում:

Գ. ՍՏԱՐՈՎՈՅՏՈՎԱ
«Արգումենտի և ֆակտի»,
հոկտեմբեր, 1990 թ., թիվ 48

... Այն մարդկանցից, ովքեր եղել են քաղբյուրոյի կազմում ու քվեարկել Գորբաչովի ընտրության համար, ոչ ոք չի մնացել: Ոչ մի մարդ: Ինչ է, նրանք բոլորը անարժան մարդի՞կ էին: Եթե մենք անարժան մարդիկ էինք, ապա ինչո՞ւ նա, որին մենք ընտրել ենք, արժանի է երկիրը ղեկավարելու:

1985 թվականից ի վեր երկրում տեղի է ունենում քայքայում՝ քայքայում տնտեսության մեջ, սոցիալական ոլորտում: Մարդիկ սկսել են վատ ապրել, շատ ավելի վատ, քան երբեւէ: Երկրում ծայրահեղ բարդացված է բարոյահոգեբանական մթնոլորտը, ազգամիջյան բախումները դարձել են սովորական երեւույթ, քայքայվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, տեղի են ունենում անկառավարելի գործընթացներ:

... Ինձ համար պարզ է այն, ինչ տեղի է ունեցել Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ, կարելի էր կանխել:

Ես ուզում էի հանդիպել Գորբաչովի հետ (Լեռնային Ղարաբաղի մասին խոսելու համար— ԱԿ), բայց նա ինձ չընդունեց: Այն պահին ես արդեն կենսաթոշակառու էի: Օգնականներն ասում են՝ նա գիտե, մենք զեկուցել ենք: Այնտեղ միշտ պատասխանը պարզ է՝ մենք զեկուցել ենք, նա գիտե, պետք է սպասել մինչեւ հրավիրի: Սպասեցի մեկ օր, երկու օր, մեկ ամիս՝ ոչինչ չկա:

ՀԱՐՑ.— Մի՞թե Լեռնային Ղարաբաղը Ալիեւի ու Դեմիրճյանի գաղտնի դավադրությունը չէ: Այդպիսի ակնարկներ մեկ անգամ չէ, որ եղել են մեր թերթերում:

— Դրանք հիմարություններ են: Ալիեւի ու Դեմիրճյանի միջեւ ոչ մի դավադրություն չի եղել ու չկա: Այդ ամենը շատ հիմար է հնչում: Եթե Ալիեւը ադրբեջանցի է, եթե ես կանգնած եմ Ադրբեջանի տարածքային ամբողջականության դիրքերում, այդ դեպքում ինչո՞ւ ես պետք է բարդացնեի իրադրությունը Լեռնային Ղարաբաղում:

... Հայաստանում, համաշխարհային ամբողջ հասարակայնության աչքերի առջեւ, վերջին երկու տարիների ընթացքում ստեղծվում են ապօրինի զինվորական կազմավորումներ: Մոսկվան ոչ մի միջոց չի ձեռնարկում: Երբ այդ կազմավորումներն արդեն ստեղծված են, լավ զինված, ընդ որում հայտնի է, որ զենքը նրանց մոտ է գալիս արտասահմանից, իսկ այդ ջոկատների բոլոր զինվորներն ու հրամանատարներն արդեն ունեն հանդիսավորությամբ տրված անդամության գրքույկներ, երկրի պրեզիդենտը հրապարակում է հրամանագիր ապօրինի զինվորական կազմավորումների զինաթափման մասին: Ինչն է նկատի առնվում: Չէ՞ որ Հայաստանից բացի դրանք ոչ մի տեղ չկան: Բայց նա չի համարձակվում կոնկրետ տալ Հայաստանի անունը: Սպառվեց տասնհինգօրյա ժամկետը, Հայաստանում ամեն ինչ մնաց առաջվա պես, ոչ ոք պրեզիդենտին չի լսում, և այն ժամանակ նա երկարաձգում է իր հրամանագրի ժամկետը եւս երկու ամսով... Իսկ հետո մենք զարմանալու ենք, որ Ադրբեջանում այսօր շատ ուժեղ են Խորհրդային Միության կազմից դուրս գալու տրամադրությունները:

Հ. ԱԼԻԵՎ
«7 ս պլյուսով», նոյեմբեր, 1990 թ., թիվ 9